Կ Ա Ր Ծ Ի Ք

Նարեկ Արայիկի Էլոյանի ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Դպրոցականների շարժողական ակտիվության ապահովման հիմնախնդիրը մշտապես գտնվել է տարբեր մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս համատեքստում կարևոր է փաստել, որ չնայած մասնագետների շարունակական ջանքերին, ինչպես արտերկրում, այդպես էլ Հայաստանում դեռևս լիարժեք, համակարգային ձևով լուծված չեն դպրոցական ֆիզիկական դաստիարակության գործընթացի բարելավմանն ուղղված խնդիրները: Ուստի, ուսումնասիրությունների արդյունքում նշմարված ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործման հիմնական ուղղություններից մեկը կարող է լինել նաև Ն. Էլոյանի հետազոտական աշխատանքի շրջանակում իրականացվող ուսումնասիրման հիմնախնդիրը, որը վերաբերում է հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության առանձնահատկությունների բացահայտմանը:

Հեղինակի կողմից մշակվել է հանրակրթական դպրոցի 7-9-րդ դասարանների տուրիստական պատրաստության բովանդակությունը և դրա դասավանդման մեթոդիկան:

Ն. Էլոյանը փորձ է կատարել հիմնավորել տուրիստական պատրաստության անցկացման անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում, ինչպես նաև բացահայտել տուրիստական պատրաստության մեթոդիկայի արդյունավետությունը դպրոցականների առողջության ամրապնդման, ֆիզիկական պատրաստվածության բարձրացման և անձի համակողմանի ձևավորման վրա:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն պարունակում է 14 աղյուսակ և 25 գծապատկեր ու շարադրված է 115 համակարգչային էջի վրա:

Աշխատանքի ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ձևակերպված են աշխատանքի նպատակը, հետազոտության հիմնական խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ինչես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում, որը բաղկացած է 5 ենթագլուխներից, Ն. Էլոյանը պարզաբանում է տուրիզմի սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունները, տուրիզմը ծրագրանորմատիվային փաստաթղթերում,

հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև անդրադառնում է այդ ընթացքում միջառարկայական կապերի նշանակությանը:

Աշխատանքի երկրորդ գլխում անդրադարձ է կատարվել հետազոտության մեթոդներին և կազմակերպման առանձնահատկություններին: Այստեղ նկարագրված են հեղինակի կողմից հետազոտության ընթացքում կիրառված բոլոր մեթոդները. գրական աղբյուրների վերլուծություն, սոցիոլոգիական հարցում, թեստավորում, սիրտանոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի հետազոտում, մանկավարժական գիտափորձ, մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ: Այս բաժնում ներկայացված են նաև հետազոտության կազմակերպմանն ու քանակակազմին վերաբերող տեղեկություններ:

Ատենախոսական աշխատանքի երրորդ գլխում Նարեկ Էլոյանը քննարկում և վերլուծում է դպրոցականների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների շրջանում անցկացված անկետային հարցման արդյունքները: Այնուհետև, սույն գլխի 3-րդ ենթաբաժնում ներկայացված են դպրոցականների ֆիզիկական պատրաստության և ֆունկցիոնալ վիճակի նախնական գնահատումը: Ի դեպ այս գլխի վերջում ամփոփում ներկայացված չէ:

Աշխատանքի եզրափակիչ՝ չորրորդ գլխում հեղինակը ներկայացնում է 7-9-րդ դասարաններում տուրիստական պատրաստության դասավանդման մեթոդիկայի փորձարկմանը վերաբերող մանկավարժական գիտափորձի արդյունքները: Վերլուծվում են հեղինակի կողմից 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում սովորողների տուրիստական պատրաստության մշակված բովանդակությամբ դասերի կազմակերպման ներգործության ուղղությունները: Ընդ որում, քաղաքաբնակ և գյուղաբնակ երեխաների վրա տուրիստական պատրաստության իր կողմից մշակված բովանդակության համեմատական ներգործության առանձնահատկությունները պարզելու նպատակոնվ Ն. Էլոյանը գիտափորձեր է կազմակերպել թե՛ Երևանի, թե՛ Արագածոտնի մեկական դպրոցներում: Գլխի վերջում տրված է ամփոփում:

Ատենախոսությունը շարադրված է պարզ, մատչելի լեզվով, հեշտ է ընթերցվում:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գործնական նշանակությունը, առանձնակի անհրաժեշտ է նշել որոշ դիտողություններ և առաջարկություններ.

1. Երկու փորձարարական խմբերի գիտափորձից առաջ և հատկապես հետո ստացված թվային տվյալներն առավել օբյեկտիվ համեմատելու համար ցանկալի էր ձևավորել գոնե մեկ ստուգողական խումբ:
2. Գիտափորձի ընթացքում դպրոցականների կողմից բնական արգելքները հաղթահարելու կարողությունների շարժը միայն ինքնագնահատման միջոցով պարզելն այդ հարցի վերաբերյալ տվել է մասնակի պատկեր: Աշխատանքն էապես կշահեր, եթե դպրոցականների ինքնագնահատմանը զուգահեռ

հեղինակի կողմից կիրառվեր փորձագիտական գնահատման մեթոդն ու ստացված տվյալները ենթարկվեին համեմատության:

3. 3.1 ենթագլխում (էջ 35-39) ներկայացված անկետային հարցման տվյալներից պարզ չի դառնում, արդյո՞ք դրանք գյուղաբնակ և/կամ քաղաքաբնակ դպրոցականներին են վերաբերում: Այստեղ հստակեցված չէ նաև հարցվածների տարիքային սահմանը:
4. Աշխատանքում տեղ գտած աղյուսակների և գծապատկերների մեծ մասը միանշանակ կարելի է տեղափոխել աշխատանքի հավելված, հատկապես, որ որոշ դեպքերում չկան դրանց ուղեկցող համապատասխան վերլուծություններ:
5. Աշխատանքի գործնական առաջարկությունները շատ թույլ են: Կարելի է այդ բաժինն ընդհանրապես հանել: 2-րդ առաջարկությունն ավելի շուտ ձևակերպված է որպես եզրակացություն:
6. Ընդհանուր ներառականության առումով կարևոր է նաև հասկանալ, թե առաջարկվող մեթոդիկայով կազմակերվող դասերի պարագայում ի՞նչ են անելու կրթության առանձնահատուկ կարիք ունեցող դպրոցականները: Այս համատեքստում պետք է հասկանալ նաև բժշկական տարբեր խմբերում ընդգրկված սովորողների գործառույթների շրջանակը:
7. Կան մի շարք տեխնիկական վրիպակներ և բացթողումներ. Օրինակ. 9-րդ էջում 3-րդ պարբերության մեջ փակագծերում բացի գրականության ցանկի հերթական համարից նշված են նաև էջերը: Գրականության ցանկի վերջին աղբյուրը (էջ 115) կիսատ է, դրված է քառակուսի փակագծերում, ինչը պետք է ևս շտկվի: Գծապատկեր 3-ում (էջ 38) նշված պատասխանների տարբերակներից մի քանիսի շարադրանքը կիսատ է: Կոնսպեկտներում կան մի շարք ձևակերպումներ, որոնք ևս կիսատ են և/կամ շտկման կարիք ունեն. «ետ», պետք է լինի «հետ», «ազդրերը առաջ բարձրացնելով»՝ «ազդրերը վեր բարձրացնելով» (էջ 65), «գլխը»՝ բաց է թողնված «ու» տառը (էջ 66), «Շնչառական վարժ»՝ «Շնչառական վարժություններ» (67 էջ), «մատեր»՝ «մատներ» (էջ 73), «Օրգանիզմը աստիճանաբար հասցնել հանգիստ վիճակի»՝ «Աստիճանաբար նվազեցնել բեռնվածությունը», «Տնային աշխատանք»՝ «Տնային հանձնարարություն» (էջ 76), «թեթև վազք»՝ «դանդաղ վազք» (էջ 76): Աշխատանքի 57-րդ էջում ներկայացված աղյուսակը ներկայացված է, որպես գծապատկեր: Ընդ որում միևնույն էջում աղյուսակի շարունակության դեպքում կարիք չկա նշել, որ մեկը մյուսի շարունակությունն է: Կարելի է անգամ նույն աղյուսակը ամբողջական ներկայացնել նույն էջի վրա՝ կողքի շրջած ձևով: Նույն ձևակերպումներով, որպես գծապատկեր են ներկայացված նաև աշխատանքում տեղ գտած մի շարք այլ աղյուսակներ (էջ 63-68, 70-76): Աշխատանքի 3-րդ գլխի վերնագիրը (էջ 35). «Դպրոցականների վերաբերմունքը տուրիզմի նկատմամբ և ֆիզիկական պատրաստության աստիճանը» պարունակում է երկու, միմյանցից տարբերվող թեմաներ: Ընդ որում սույն գլխի 3.2 ենթագլուխը վերաբերում է

ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերաբերմունքին տուրիստական պատրաստության նկատմամբ (էջ 39):

Սակայն նշված դիտողությունները բնավ չեն ազդում կատարված աշխատանքի ընդհանուր գնահատականի և հետազոտության արժեքի վրա:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և նրանում լիովին արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նարեկ Արայիկի Էլոյանի «Տուրիստական պատրաստության մեթոդական առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում» թեմայով ատենախոսությունն իր բովանդակությամբ, գիտական նորույթով, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս,
ԲՊՀ Ֆիզիկական կուլտուրայի և
քաղաքացիական պաշտպանության
ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ՝ **Է.Յու. Ավանեսով**

ԲՊՀ գիտական քարտուղար՝ **Հ.Հ. Փիլավջյան**

«8» հունվարի 2024թ.